Պատմության օլիմպիադայի դպրոցական փուլ (2025-2026 ուստարի)
10-րդ դասարան (տևողությունը՝ 90 րոպե)

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ինչպե՞ս է Հայաստանը կոչվում Բեհիսթունյան արձանագրության էլամերեն բաժնում:
1/ Արմենիա 2/ Հարմինույա 3/ Արմինա 4/Ուրարտու

2. Ե՞րբ է Նաիրին ասորեստանյան արձանագրությունում հիշատակվել որպես միասնական երկիր-պետություն:
1/ Ք. ա. XIV դ. 2/ Ք. ա. XIII դ. 3/ Ք. ա. XI դ. 4/ Ք. ա. IX դ.

3. Ե՞րբ է ստորագրվել Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հռչակելու մասին համաձայնագիրը:
1/ 1920 թ. նոյեմբերի 29-ին 3/ 1920 թ. դեկտեմբերի 2-ին
2/ 1921 թ. դեկտեմբեր 2-ին 4/ 1921 թ. նոյեմբերի 29-ին

4. Ո՞ր թվականին է Ասորեստանի արքա Թիգլաթպալասար III–ը արշավել դեպի Տուշպա:
1/ Ք.ա 743 թ. 2/ Ք.ա 735 թ. 3/ Ք.ա 734 թ. 4/ Ք.ա 753 թ.

5. Ու՞մ է Մ. Խորենացին համարում մեր պատմության երրորդ խոշորագույն դեմքը՝ Հայկից ու Արամից հետո:
1/ Երվանդ I Սակավակյաց 2/ Տիգրան Երվանդյան 3/ Երվանդ III 4/ Պարույր Սկայորդու

6. Ո՞վ է Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետը:
1/ Հովհաննես Քաջազնունի 2/ Համո Օհանջանյան 3/ Սիմոն Վրացյան 4/ Ալեքսանդր Խատիսյան

7. Ո՞րտեղ է Գրիգոր Արծրունին հիմնադրել «Մշակ» թերթը:
1/ Երևանում 2/ Մոսկվայում 3/ Թիֆլիսում 4/ Կ. Պոլսում

8. Մեծ Հայքի ո՞ր նահանգ ուղարկվեց Ալ. Մակեդոնացու զորաբանակներից մեկը՝ Մենոնի գլխավորությամբ:
1/ Այրարատ 2/ Բարձր Հայք 3/ Ծոփք 4/ Մոկք

9. Հայոց արքաներից ո՞վ է հետևյալ խոսքի հեղինակը.
«Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ և որդիներիս ազատություն թողնեմ»:

1/ Երվանդ Սակավակյաց 2/ Տիգրան Երվանդյան 3/ Պարույր Սկայորդի 4/ Երվանդ III

10. Ո՞ւմ հաղթանակով ավարտվել Ք. ա. XVIII դարում Միջագետքում ցեղապետությունների միջև ընթացող պատերազմները:
1/ Սարգոն I-ի 2/ Թիգլաթպալասար I-ի 3/ Համմուրապիի 4/ Տելեպինուսի

11. Ինչպե՞ս էին անվանվում ստրկական կարգավիճակ ունեցող մարդիկ Սպարտայում:
1/ էֆորներ 2/ հելոտներ 3/ պատրիկներ 4/ պլեբեյներ

12. 1942 թ. հունվարի 1-ին որտե՞ղ է հրավիրվել հակահիտլերյան պետությունների համաժողովը:
1/Թեհրանում 2/ Լոնդոնում 3/ Պոտսդամում 4/ Վաշինգտոնում

13. Ե՞րբ է Հռոմը նվաճել Եգիպտոսը:
1/ Ք. ա. 35 թ. 2/ Ք. ա. 31 թ. 3/ Ք. ա. 41 թ. 4/ Ք. ա. 45 թ.

14. Ընտրե՛ք իրադարձությունների ժամանակագրական ճիշտ դասավորությամբ տարբերակը:
ա/ Թեյշեբաինի քաղաքի կառուցումը
բ/ Արգիշտի II-ի թագադրվելը
գ/ համադաշնային կառավարման ձևից անցումը կենտրոնացված պետության
դ/ Էրեբունի ամրոցի հիմնումը
ե/ Տուշպա թագավորական քաղաքի հիմնումը
զ/ «Խալդյան դարպաս» արձանագրության ստեղծումը Վանի սրբազան ժայռի վրա
է/ Խալդիի գլխավոր տաճարի ավիրումը Սարգոն II-ի կողմից

1/ զ, ե, դ, է, գ, բ, ա 2/ զ, դ, ե, է, գ, ա, բ 3/ ե, դ, զ, գ, է, ա, բ 4/ ե, զ, դ, գ, է, բ, ա

15. Ընտրե՛ք ճիշտ զույգերով տարբերակը:

1. Սոլոն	ա/ պետական պաշտոն վարելու համար սահմանել է աշխատավարձ
2. Դարեհ I	բ/ Աթենքի կառավարմանը մասնակից է դարձրել բոլոր չափահաս տղամարդկանց
3. Կյուրոս Մեծ	գ/ զոհվել է մասագետների ցեղի դեմ մղվող ճակատամարտում
4. Կանբիզ	դ/ ստեղծել է ատենակալների դատարան
5. Պերիկլես	ե/ Ստորին Եգիպտոսը վերածել է պարսկական սատրապության
6. Կլիսթենես	զ/ սկսել է Պերսեպոլիս մայրաքաղաքի կառուցումը
	է/ սկսել է արխայիկյան դարաշրջանի Ակրոպոլիսի կառուցումը

1/ 1-դ, 2-զ, 3-գ, 4-ե, 5-ա, 6-բ
2/ 1-ա, 2-զ, 3-գ, 4-ե, 5-դ, 6-է
3/ 1-դ, 2-ե, 3-գ, 4-զ, 5-ա, 6-է
4/ 1-ա, 2-ե, 3-զ, 4-գ, 5-դ, 6-է

Կարճ պատասխանով առաջադրանքներ:
<u>Ուշադրություն:</u> *Պարտադիր կերպով պահպանե՛ք տարբերակների հաջորդականությունը:*

16. Նշվածներից որո՞նք են Պելոպոնեսյան պատերազմի հետևանքները:

1/ Զարգացավ աթենական ժողովրդավարությունը, հունական արվեստը
2/ Աթենքից վտարվեց Պերիկլեսը
3/ Աթենքն ընդունեց Սպարտայի գերիշխանությունը
4/ Քանդվեցին Երկար պարիսպներն ու նավահանգիստ Պիրեյոսի ամրությունները
5/ Սպարտան ճանաչեց պարսիկների գերիշխանությունը Դեկելեյա քաղաքում
6/ Աթենքում իշխանության եկավ Ալկիվիադեսը
7/ Աթենքը հրաժարվեց Ատտիկայից և Սալամին կղզուց
8/ Ցրվեց Աթենական ծովային միությունը

17. Նշվածներից որո՞նք են Վանի թագավորության արքաների բարեփոխումների հետևանքները:

1/ Տեղական սեպական գրի ստեղծման արդյունքում ընդլայնվեց ուրարտական մշակույթը, ամրապնդվեց գրային համակարգը՝ հատկապես կառավարման և պետական գործերի ոլորտներում:
2/ Կրոնական բարեփոխումները հանգեցրին դիցարանի մասնատմանը և տարբեր երկրամասերում պաշտամունքային բազմազանությանը:
3/ Ռազմական բարեփոխումների արդյունքում Վանի թագավորությունում աշխարհազորը ամբողջությամբ վերացվեց և փոխարինվեց միայն մշտական պրոֆեսիոնալ բանակով:
4/ Մենուայի կառուցած ջրանցքի շնորհիվ Վանի թագավորությունում յուրացվել են ընդարձակ հողատարածություններ, ընդլայնվել են այգիներն ու ցանքատարածությունները:
5/ Մենուայի կառուցած ջրանցքը չապահովեց գյուղատնտեսական լայն տարածքների ոռոգումը, ինչի հետևանքնով տնտեսությունը վնասներ կրեց, այգիները և ցանքատարածությունները կրճատվեցին:
6/ Ռուսա I-ը շարունակեց պետական համակարգի բարեփոխումները, որի արդյունքում նախկին նահանգների փոխարեն ձևավորվեց մարզային կառավարման համակարգ:

18. Ընտրե՛ք տերմինների ճիշտ բացատրությունները։

1/ Սարգիս Կասյանի նախագահությամբ Բաքվում բոլշևիկների կազմավորած մարմինը, որը մտավ Հայաստան և երկիրը հռչակեց խորհրդային հանրապետություն, կոչվում էր Հայաստանի Հեղափոխական խորհուրդ։

2/ Ռազմական կոմունիզմի քաղաքականության կենտրոնական միջոցառումը կոչվում է պարենմասնատրում, որով բռնագրավվում էր բնակչության արտադրած կամ ունեցած՝ պետության կոմից «ավելցուկ» համարվող հացակատիկը և այլ մթերքներն ու ապրանքները։

3/ Շուկայական հարաբերությունների (առաջարկ-պահանջարկի) հիման վրա տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու նպատակով իրագործվող քաղաքականությունը կոչվում էր ՆԷՊ։

4/ 1921 թ. փետրվարյան ապստամբության արդյունքում Երևանում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Հայրենիքի փրկության կոմիտե (ՀՓԿ)՝ Սիմոն Վրացյանի նախագահությամբ։

5/ Արտաքին օգնության կազմակերպման նպատակով 1921 թ. Երևանում Հովհաննես Թումանյանի նախագահությամբ ստեղծված կազմակերպությունը կոչվում էր Հայաստանի Բարեգործական կոմիտե։

6/ 1922 թ. մարտին Անդրկովկասի երեք հանրապետությունների ներկայացուցիչների կոնֆերանսը հաստատեց դաշնային պայմանագիրը, որով հիմնադրված դաշնային կազմավորումը կոչվում էր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն։

19. Նշված տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները։

1/1878 թ. ռուս-թուրքական բանակցությունների օրերին Կ. Պոլսի հայոց պատրիարք Մկրտիչ Խրիմյանը հանդիպեց ռուսական պատվիրակության ղեկավար Ն. Իգնատևի հետ և խնդրեց պայմանագրում տեղ հատկացնել արևմտահայության պահանջներին։

2/ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Բարձր դուռը պարտավորվում է Արևմտյան Հայաստանում անհապաղ բարեփոխումներ անցկացնել և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից։

3/ Ըստ Սան-Ստեֆանոյի պայմանագրի՝ ռուսական զորքերը իրավունք ունեին մնալու Հայաստանում 6 ամիս ժամկետով՝ մինչև բարեփոխումների իրականացումը։

4/ Ըստ Սան-Ստեֆանոյի պայմանագրի՝ ռուսական զորքերը անհապաղ պետք է դուրս բերվեին գրված տարածքներից։

5/ Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ Անգլիան Թուրքիայից ստացել է Կիպրոս կղզին՝ փոխարենը խոստանալով պաշտպանել թուրքական պահանջները։

6/ Ըստ Բեռլինի պայմանագրի՝ Թուրքիային վերադարձվեցին Կարսը՝ իր շրջակա գավառներով, Բայազետը, Ալաշկերտը։

20. Նշված տարբերակներից ընտրե՛ք ճիշտ պնդումները։

1/ Արգիշտի I-ը կատարել է գրային բարեփոխում և ստեղծել է տեղական սեպագիրը։

2/ Մեզ հասած հայկական առաջին արքայական դրամները հատել է Երվանդ III-ը։

3/ Սարդուրի II-ը Սևանա լճի ավազանում վերակառուցել է խոշոր ամրոցներ՝ Խալդի և Թեյշեբա աստվածների անուններով։

4/ Տիգրան I Երվանդյանի մահից հետո՝ Ք. ա. 525 թվականին, Հայաստանը ճանաչել է Աքեմենյանների գերիշխանությունը։

5/ Գավգամելայի ճակատամարտում աքեմենյան զորքի աջ թևում են եղել Երվանդ III-ի և Միթրաուստեսի ղեկավարած հայկական զորքերը։

6/ Ռուսա II-ը բարեկամական և դաշնակցային հարաբերություններ է հաստատել կիմերների հետ։

7/ Արշամ Երվանդականին հաջորդած նրա որդի Շամը Ծոփքում կառուցել է Սամոսատը։

8/ Մենուա արքայի կառուցած 72 կմ երկարությամբ ջրանցքը օգտագործվում է մինչ օրս։

Հանրապետական օլիմպիադայի
Հանձնաժողովի նախագահ՝ պ.գ.թ. Գևորգ Կեսոյան 03.12.2025 թ.